ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 Երևան,Վազգեն Սարգսյան 3/8, հեռ.594 013
էլ. փոստ suren.krmoyan@justice.am

№ _____
«____» _____ 20 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑ 1/3

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի նոյեմբերի 28-ի գրության՝ հայտնում եմ հետևյալը.

1. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը լրամշակման և ներքին քննարկումների փուլում է:

2. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակը պատրաստ լինելուն պես կդրվի հանրային քննարկման:

3. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու կոնկրետ ժամկետ նախանշված չէ:

4. Քաղաքացիական հասարակության կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը ներկայացված առաջարկների մի մասի հիման վրա կազմված ամփոփաթերթը տեղադրված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am):

Ինչ վերաբերում է քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված այլ առաջարկներին, ապա այդ առաջարկների հիման վրա կազմված ամփոփաթերթը

հնարավոր կլինի տրամադրել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակի հրապարակումից հետո միայն:

5. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկությունը՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով **ստացված** և **ձևավորված** տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ): 2017 թվականի նոյեմբերի 28-ի դրությամբ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակը դեռևս ստացված և ձևավորված չէ: Ելնելով վերոգրյալից հարկ է նշել, որ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի լրամշակված տարբերակը Ձեզ կտրամադրվի «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով սահմանված կարգով հանրային քննարկման դրվելու հետ միաժամանակ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ**

Կատարող՝ Էմիլ Մարգարյան
Իրավական ապահովման վարչություն
Հեռ. (010) 59-40-74